

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

15 հունիսի 2012 թվականի

**թիվ 34**

**«Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների,  
այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար  
նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային  
միության տեխնիկական կանոնակարգի ընդունման վերաբերյալ**

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը որոշեց.

1. Ընդունել «Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 027/2012) (կցվում է):

2. Սահմանել, որ սույն Որոշման 1-ին կետում նշված՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

<b>Բելառուսի Հանրապետության կողմից</b>	<b>Ղազախստանի Հանրապետության կողմից</b>	<b>Ռուսաստանի Դաշնության կողմից</b>
<b>Ս. Ռումաս</b>	<b>Կ. Կելիմբետով</b>	<b>Ի. Շուվալով</b>

**ԸՆԴՈՒՆՎԱԾ Է**

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի խորհրդի  
2012 թվականի հունիսի 15-ի  
թիվ 34 որոշմամբ

**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ՄՄ ՏԿ 027/2012**

**ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, ԱՅԴ  
ԹՎՈՒՄ՝ ԴԻԵՏԻԿ ԲՈՒԺԻՉ ԵՎ ԴԻԵՏԻԿ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍՆՆԴԻ ՀԱՄԱՐ  
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

## Գլուխ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ՆԱԽԱԲԱՆ

1. «Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության սույն տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակներին, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքին ներկայացվող՝ կիրառության եւ կատարման համար պարտադիր միասնական պահանջներ սահմանելու, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող սննդամթերքի ազատ տեղափոխումն ապահովելու նպատակով:

3. Եթե հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի առնչությամբ ընդունվեն Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգեր, որոնցով սահմանվում են դրանց ներկայացվող պահանջները, ապա հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակները, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը պետք է համապատասխանի Մաքսային միության այն տեխնիկական բոլոր կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

## Հոդված 1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են՝

1) տեխնիկական կանոնակարգման օբյեկտները.

2) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների անվտանգությանը ներկայացվող պահանջները (այդ թվում՝ սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջները).

3) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նույնականացման կանոնները.

4) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման ձեւերը եւ կանոնները:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգի ընդունման նպատակներն են՝

մարդու կյանքի եւ (կամ) առողջության պաշտպանությունը.

ձեռք բերողներին (սպառողներին) մոլորության մեջ գցող գործողությունների կանխարգելումը:

3. Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման ժամանակ պետք է հաշվի առնվեն սննդամթերքին՝ դրա մակնշմանը, սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերին, այդ թվում՝ փաթեթավորմանը եւ օգտագործվող պարենային հումքին ներկայացվող պահանջները, որոնք սահմանված են Մաքսային միության համապատասխան տեխնիկական կանոնակարգերում:

4. Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման ժամանակ պետք է հաշվի առնվեն Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջները, որոնցով սահմանվում են սննդամթերքին եւ նրա առանձին տեսակներին ներկայացվող պարտադիր պահանջները:

## **Հոդված 2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտներն են Մաքսային միության անդամ պետությունների միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ բաց թողնվող եւ շրջանառության մեջ գտնվող՝

մարզիկների, հղի կանանց ու կերակրող մայրերի սննդի համար նախատեսված հատուկ նշանակության սննդամթերքը.

դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի, այդ թվում՝ մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքը:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները չեն տարածվում՝

մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի վրա՝ բացառությամբ մանկական սննդի համար դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի.

սննդի ձեռնարկություններում (հասարակական սննդի, կազմավորված անձնակազմի կողմից) պատրաստվող սննդամթերքի վրա.

ավելի քան 1 մգ/դմ հանքայնացումով կամ ավելի քիչ հանքայնացումով, սակայն բալնեոլոգիական նորմաներից ոչ պակաս քանակություններով կենսաբանական ակտիվ նյութեր պարունակող բնական հանքային, բուժիչ սեղանի, բուժիչ հանքային ջրերի վրա.

սննդում օգտագործվող կենսաբանորեն ակտիվ հավելումների վրա:

## **Հոդված 3. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

1. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակները, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը տեխնիկական կանոնակարգման այն օբյեկտների թվին, որոնց

առնչությամբ կիրառվում է սույն Տեխնիկական կանոնակարգը, դասելու նպատակներով շահագրգիռ անձանց կողմից իրականացվում է սննդամթերքի նույնականացում:

2. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի նույնականացումն իրականացվում է «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված կարգով:

#### **Հոդված 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ**

Սույն Տեխնիկական կանոնակարգում օգտագործվում են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված սահմանումները, ինչպես նաեւ հետեւյալ եզրույթներն ու սահմանումները՝

1) դիետիկ բուժիչ սննդի համար նախատեսված սննդամթերք՝ հատուկ նշանակության սննդամթերք, որն ունի տրված սննդային եւ էներգետիկ արժեք, ֆիզիկական եւ զգայորոշման հատկություններ եւ նախատեսված է բուժիչ սննդակարգի բաղադրության մեջ օգտագործվելու համար.

2) դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերք՝ հատուկ նշանակության սննդամթերք, որը նախատեսված է ածխաջրային, ճարպային, սպիտակուցային, վիտամինային եւ այլ տեսակի նյութափոխանակության վերականգնման համար, որում փոփոխված է առանձին նյութերի պարունակությունը եւ (կամ) դրանց հարաբերակցությունը՝ ի համեմատություն դրանց բնական պարունակության, եւ (կամ) որի բաղադրության մեջ ներառված են սկզբնապես ոչ առկա նյութեր կամ բաղադրիչներ, ինչպես նաեւ հիվանդությունների զարգացման ռիսկերը նվազեցնելու համար նախատեսված սննդամթերք.

3) մարզիկների սննդի համար նախատեսված սննդամթերք՝ հատուկ նշանակության սննդամթերք, որն ունի տրված քիմիական բաղադրություն, բարձրացված սննդային արժեք եւ (կամ) ուղղորդված արդյունավետություն, բաղկացած է մթերքների համալիրից կամ ներկայացված է դրանց առանձին տեսակներով, որը հատուկ ազդեցություն է թողնում ֆիզիկական եւ նյարդահուզական ծանրաբեռնվածության նկատմամբ մարդու հարմարվողական կարողությունների ավելացման վրա.

4) հղի կանանց եւ կերակրող մայրերի համար նախատեսված սննդամթերք՝ հատուկ նշանակության այնպիսի սննդամթերք, որում փոփոխված է առանձին նյութերի պարունակությունը եւ (կամ) դրանց հարաբերակցությունը՝ ի համեմատություն դրանց բնական պարունակության, եւ (կամ) որի բաղադրության մեջ ներառված են սկզբնապես ոչ առկա նյութեր կամ բաղադրիչներ, նախատեսված է հղի կանանց եւ կերակրող մայրերի օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջները բավարարելու համար.

5) էնտերալ սնուցման համար նախատեսված սննդամթերք՝ դիետիկ բուժիչ կամ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված հեղուկ կամ չոր (վերականգնվում է մինչեւ օգտագործման համար պատրաստի լինելը) սննդամթերք, որը նախատեսված է անմիջապես պերօրալ օգտագործման կամ օրգանիզմը սովորական եղանակով սննդային նյութերով եւ էներգիայով ապահովելու անհնարինության դեպքում զոնդի միջոցով ներմուծման համար.

6) դիաբետիկ սննդի համար նախատեսված սննդամթերք՝ դիետիկ բուժիչ կամ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերք, որում բացակայում են դյուրամարս ածխաջրերը (միաշաքարները՝ գլյուկոզա, ֆրուկտոզա, գալակտոզա, եւ երկշաքարները՝ սախարոզա, լակտոզա), կամ դրանց պարունակությունը նվազեցված է՝ ի համեմատություն նույնանման սննդամթերքում դրանց պարունակության, եւ (կամ) փոփոխված է ածխաջրային բաղադրությունը.

7) հակառեֆյուքսային խառնուրդներ՝ խառնուրդներ, որոնք պարունակում են թանձրացուցիչ (թանձրացուցիչներ) եւ նախատեսված են վաղ տարիքի երեխաների մոտ սննդի փսխումը կանխելու համար.

8) վաղաձին եւ (կամ) թերքաշ երեխաների սննդի համար նախատեսված խառնուրդներ՝ մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք, որն արտադրված է կովի կաթի կամ այլ մթերատու կենդանիների կաթի եւ (կամ) կաթի վերամշակումից հետո ստացվող արտադրանքի հիման վրա ու նախատեսված է վաղաձին եւ (կամ) թերքաշ երեխաների ֆիզիոլոգիական պահանջները բավարարելու համար.

9) լակտոզայի ցածր պարունակությամբ (առանց լակտոզայի պարունակության) սննդամթերք՝ դիետիկ բուժիչ կամ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերք, որն արտադրված է կովի կաթի կամ այլ մթերատու կենդանիների կաթի եւ (կամ) կաթի վերամշակումից հետո ստացվող արտադրանքի հիման վրա, եւ որում լակտոզայի պարունակությունը նվազեցված է՝ ի համեմատություն նույնանման սննդամթերքի.

10) սննդամթերք՝ առանց (կամ ցածր պարունակությամբ) առանձին ամինաթթուների՝ դիետիկ բուժիչ կամ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերք, որ ստացվել է առանց (կամ ցածր պարունակությամբ) առանձին ամինաթթուների եւ (կամ) առանց ֆենիլալանինի պարունակության ամինաթթուների խառնուրդներից անջատված սպիտակուցի հիդրոլիզատների հիման վրա եւ (կամ) ֆենիլալանինի նվազեցրած պարունակությամբ բաղադրիչների օգտագործմամբ:

## **Հոդված 5. ՇՈՒԿԱՅՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի 2–րդ հոդվածի 1–ին կետում նշված հատուկ նշանակության սննդամթերքը, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը շուկայում



շրջանառության մեջ է դրվում, եթե այն համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգին, ինչպես նաև Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերին, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հոդվածի 1-ին կետում նշված հատուկ նշանակության սննդամթերքը, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը, որը համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգի, Մաքսային միության այնպիսի այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա, եւ որն անցել է համապատասխանության գնահատում (հավաստում), մակնշվում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

## **Գլուխ 2. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

### **Հոդված 6. ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԻԵՏԻԿ ԲՈՒԺԻՉ ԵՎ ԴԻԵՏԻԿ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍՆՆԴԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության համար օգտագործվող պարենային հումքը, սննդային հավելումները պետք է համապատասխանեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված անվտանգության պահանջներին:

Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության ժամանակ թույլատրվում է օգտագործել այնպիսի սննդային հավելումներ, որոնք համապատասխանում են Սույն Տեխնիկական կանոնակարգի ու «Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

2. Դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը պետք է բավարարի մարդու օրգանիզմի՝ անհրաժեշտ սննդային նյութերի եւ էներգիայի ֆիզիոլոգիական պահանջները, հաշվի առնելով հիվանդությունների ռիսկի եւ ախտաճնության գործոնները, ներկա եւ ապագա սերնդի առողջության համար վտանգ ներկայացնող աղտոտիչների եւ կենսաբանորեն ակտիվ նյութերի ու միացությունների, միկրոօրգանիզմների եւ այլ կենսաբանական օրգանիզմների պարունակությամբ պետք է համապատասխանի սահմանված հիգիենիկ պահանջներին:

### 3. Չի թույլատրվում՝

1) դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի, հղի կանանց եւ կերակրող մայրերի սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության համար օգտագործել թռչնի միս, բացի պաղեցրածից, մեխանիկական եղանակով ոսկրահանված թռչնի միս եւ թռչնի մսից ստացված՝ կոլագեն պարունակող հումք.

2) հղի կանանց եւ կերակրող մայրերի համար նախատեսված սննդամթերքի, մանկական սննդի համար դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության համար օգտագործել ԳՁՕ եւ (կամ) ԳՁՕ-ից ստացված բաղադրիչներ պարունակող պարենային սննդային հումք:

4. Հղի կանանց եւ կերակրող մայրերի սննդի համար նախատեսված սննդամթերքը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին եւ 2-րդ հավելվածներով սահմանված պահանջներին:

5. Վաղ տարիքի երեխաների համար մանկական դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի առանձին տեսակները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածով սահմանված պահանջներին:

6. Աղի փոխարինիչների բաղադրությունը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածով սահմանված պահանջներին:

Աղի փոխարինիչներում նատրիումի պարունակությունը չպետք է գերազանցի աղի փոխարինիչների խառնուրդների զանգվածի 120 մգ/100 գ-ը:

7. Աղի մեջ կամ աղի փոխարինիչներում յոդ պարունակող միացությունների ավելացումը պետք է համապատասխանի Մաքսային միության այն անդամ պետության ազգային օրենսդրության նորմերին, որտեղ իրացվում է արտադրանքը:

8. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ մարզիկների սննդի համար նախատեսված սննդամթերքի բաղադրության մեջ չպետք է առկա լինեն հոգեմետ նյութեր, թմրամիջոցներ, թունավոր, խիստ ներգործուն, դոպինգային նյութեր եւ (կամ) դրանց մետաբոլիտները, այլ արգելված նյութեր, որոնք ընդգրկված են Հակադոպինգային համաշխարհային գործակալության (WADA) ցանկում:

9. Առանց սնձանի՝ հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակները պետք է բաղկացած կամ պատրաստված լինեն մեկ կամ ավելի բաղադրիչներից, որոնք չեն պարունակում ցորեն, աշորա, գարի, վարսակ կամ դրանց խաչասերված տեսակներ (ստացվում են դրանց խաչավորման եղանակով) եւ (կամ) պետք է բաղկացած կամ պատրաստված լինեն հատուկ եղանակով

(սնձանի պարունակության մակարդակը նվազեցնելու համար) մեկ կամ ավելի բաղադրիչներից, որոնք ստացվում են ցորենից, աշորայից, գարուց, վարսակից կամ դրանց խաչասերված տեսակներից, եւ որոնցում սնձանի պարունակության մակարդակը օգտագործման համար պատրաստի արտադրանքում կազմում է 20 մգ/կգ-ից ոչ ավելի:

10. Սնձանի ցածր պարունակությամբ հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակները պետք է բաղկացած կամ պատրաստված լինեն հատուկ եղանակով (սնձանի պարունակության մակարդակը նվազեցնելու համար) մեկ կամ ավելի բաղադրիչներից, որոնք ստացվել են ցորենից, աշորայից, գարուց, վարսակից կամ դրանց խաչասերված տեսակներից, եւ որոնցում սնձանի պարունակության մակարդակը օգտագործման համար պատրաստի արտադրանքում կազմում է 20 մգ/կգ-ից ավելի, սակայն 100 մգ/կգ-ից ոչ ավելի:

### **Գլուխ 3. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՈՒՄԸ**

#### **Հոդված 7. ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԻԵՏԻԿ ԲՈՒԺԻՉ ԵՎ ԴԻԵՏԻԿ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍՆՆԴԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի փաթեթավորումը եւ մակնշումը պետք է համապատասխանեն «Սննդամթերքի մակնշման մասին տեխնիկական կանոնակարգ» եւ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

2. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակները, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը պետք է բաժնեծրարված եւ փաթեթավորված լինեն այնպիսի եղանակով, որը թույլ է տալիս ապահովել դրանց անվտանգությունը եւ մականշվածքում նշված սպառողական հատկությունները պիտանիության ժամկետում՝ դրանց փոխադրման եւ պահպանման պայմանները պահպանելու դեպքում:

3. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակները, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի փաթեթավորման ժամանակ անհրաժեշտ է կիրառել այնպիսի նյութեր եւ արտադրատեսակներ, որոնք համապատասխանում են Մաքսային միության համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերի եւ արտադրատեսակների անվտանգությանը ներկայացվող պահանջներին:

4. Դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված արագ փչացող սննդամթերքը պետք է բաց թողնվի միայն կշռածրարված ձեւով մեկանգամյա օգտագործման համար նախատեսված մանրահատ փաթեթվածքով:

5. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի մականշվածքում պետք է առկա լինեն տեղեկություններ՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հոդվածով սահմանված սահմանումներին համապատասխան սննդամթերքի նշանակությունների, անձանց կատեգորիաների մասին, որոնց համար դրանք նախատեսված են, եւ (կամ) այդ սննդամթերքի բաղադրության փոփոխության մասին տեղեկություններ, դրանց օգտագործման վերաբերյալ առաջարկություններ:

6. Դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի՝ փաթեթվածքը բացելուց հետո պահպանման վերաբերյալ ցուցումները պետք է ներկայացվեն մականշվածքում, եթե դա անհրաժեշտ է սննդամթերքի հատկությունների ամբողջությունը եւ սննդարարությունն ապահովելու նպատակով: Եթե արտադրանքը չի կարելի պահել փաթեթվածքը բացելուց հետո, կամ եթե այն չի կարելի պահել փաթեթվածքում վերջինիս բացելուց հետո, ապա պետք է առկա լինի դրա վերաբերյալ նախազգուշացում:

7. Ի լրումն մականշվածքի վերաբերյալ բոլոր ցուցումների, որոնք վերաբերում են նատրիումի ցածր պարունակությամբ սննդամթերքին (բացառությամբ, որպես այդպիսին, աղի փոխարինիչների), պետք է կատարել մականշվածքի վերաբերյալ հետեւյալ հատուկ ցուցումները՝

1) փոխարինիչների առկայության դեպքում պետք է նշել սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածում նշված աղի փոխարինիչների առկայությունը.

2) ամբողջությամբ կամ մասամբ կալիումական աղից բաղկացած աղի փոխարինիչներ ավելացնելու դեպքում անհրաժեշտ է մականշվածքում նշել կալիումի գումարային պարունակությունը՝ արտահայտված արտադրանքի 100 գրամում կատիոնի միլիգրամներով:

8. Աղի փոխարինիչները պետք է անվանվեն «աղի փոխարինիչներ՝ նատրիումի ցածր պարունակությամբ» կամ «դիետիկ աղ՝ նատրիումի ցածր պարունակությամբ»: Աղի փոխարինիչների մականշվածքում պետք է առկա լինի բաղադրամասերի ամբողջական ցանկը, ինչպես նաեւ կատիոնների (նատրիումի, կալիումի, կալցիումի մագնեզիումի, ամոնիումի եւ քլորիդի) պարունակությունը՝ փոխարինիչների խառնուրդի զանգվածի 100 գրամում:

9. Մարզիկների սննդի համար նախատեսված սննդամթերքի մականշվածքում պետք է ներառվի հետեւյալ լրացուցիչ տեղեկատվությունը՝

- տրված սննդային եւ էներգետիկ արժեք եւ ուղղորդված արդյունավետություն ունեցող, սնուցիչների խմբից կազմված կամ դրանց առանձին տեսակներով ներկայացված արտադրանքի համար նշվում է հետեւյալ տեղեկատվությունը՝ «մարզիկների սննդի համար նախատեսված հատուկ նշանակության սննդամթերք».

- սպառողական փաթեթվածքում լրացուցիչ նշվում է հետեւյալ տեղեկատվությունը՝ արտադրանքի սննդային եւ էներգետիկ արժեքի մասին տեղեկություններ, ֆիզիոլոգիական պահանջների տոկոսը. առաջարկվող չափաքանակը, պատրաստման եղանակները (անհրաժեշտության դեպքում), օգտագործման պայմանները եւ տեսողությունը:

**Գլուխ 4. ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԻԵՏԻԿ ԲՈՒԺԻՉ ԵՎ ԴԻԵՏԻԿ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍՆՆԴԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ՊԱՏՐԱՍՏՄԱՆ), ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ (ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ), ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՈՒՏԻԼԻԶԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**Հոդված 8. ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԻԵՏԻԿ ԲՈՒԺԻՉ ԵՎ ԴԻԵՏԻԿ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍՆՆԴԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ՊԱՏՐԱՍՏՄԱՆ), ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ (ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ), ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՈՒՏԻԼԻԶԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Հատուկ նշանակության սննդամթերքի, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման գործընթացները, որոնք ապահովում են դրանց

անվտանգությունը, պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգով ու «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին:

2. Օգտագործելուց առաջ բոլոր սորուն բաղադրիչները պետք է անցկացնել մազնիսական որսիչով:

3. Կենդանի միկրոօրգանիզմների հետ աշխատելու համար տրամադրվում են առանձին շինություններ:

## **Գլուխ 5. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՀԱՎԱՍՏՈՒՄԸ)**

### **Հոդված 9. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

1. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխանությունն ապահովվում է դրա անվտանգության պահանջների կատարմամբ:

2. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մեթոդները սահմանվում են Ստանդարտների ցանկում ընդգրկված այն ստանդարտներով, որոնք պարունակում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, ինչպես նաեւ նմուշառման կանոններ:

### **Հոդված 10. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**



1. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդամթերքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացվում է պետական գրանցման ձեով՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված կարգին համապատասխան:

2. Դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդամթերքի պետական գրանցման դեպքում ներկայացվում է (են) փաստաթուղթ (փաստաթղթեր), որը (որոնք) հաստատում է (են) հայտագրված բուժիչ եւ (կամ) կանխարգելիչ հատկությունները:

3. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության, պահպանման, իրացման, փոխադրման, ուտիլիզացման գործընթացների համապատասխանության գնահատումն իրականացվում է սննդամթերքին ներկայացվող՝ սույն Տեխնիկական կանոնակարգով եւ սննդամթերքի անվտանգության ոլորտում այլ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) ձեով:

**Հոդված 11. ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
ՆՇԱՆՈՎ ՄԱԿՆՇՈՒՄԸ**

1. Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը, որը համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին եւ անցել է համապատասխանության գնահատման գործընթացը, պետք է ունենա Մաքսային միության անդամ

պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշում:

2. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումն իրականացվում է նախքան հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը շուկայում շրջանառության մեջ դնելը:

3. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանը զետեղվում է արտադրանքի յուրաքանչյուր միավորի (սպառողական տարայի եւ (կամ) պիտակի եւ (կամ) ապրանքանիշների) եւ (կամ) ապրանքաուղեկից ներկայացվող փաստաթղթերի վրա: Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է ցանկացած եղանակով, որն արտադրանքի պիտանիության ժամկետի ամբողջ ընթացքում ապահովում է պարզ եւ հստակ պատկեր:

## **Գլուխ 6. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ**

### **Հոդված 12. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ**

1. Մաքսային միության անդամ պետությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել Մաքսային միության մաքսային տարածքում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը շրջանառության մեջ դնելը կանխելու, ինչպես նաեւ այդ սննդամթերքը շրջանառությունից հանելու ուղղությամբ:

2. Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմինը պարտավոր է տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին եւ Մաքսային միության մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին ընդունված որոշման մասին՝ նշելով տվյալ որոշումն ընդունելու պատճառները եւ ներկայացնելով տվյալ միջոցը ձեռնարկելու անհրաժեշտությունը պարզաբանող ապացույցներ:

3. Սույն հոդվածը կիրառելու համար հիմք կարող են լինել հետեւյալ դեպքերը՝

սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները չկատարելը.

սույն Տեխնիկական կանոնակարգի հետ փոխկապակցված ստանդարտները սխալ կիրառելը, եթե կիրառվել են տվյալ ստանդարտները:

## **Հավելված 1**

«Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների,  
այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի  
համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին»

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի

### **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱԽՏԱԾԻՆ)**

Տեխնոլոգիական եւ (կամ) պրոբիոտիկ միկրոֆլորայի օգտագործմամբ ստացվող հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակներում նորմավորվում են կաթնաթթվային եւ պրոբիոտիկ միկրոօրգանիզմների պարունակությունը եւ տեսակային կազմը՝ աղյուսակ 1:

Նախքան իրացումը՝ վերամշակման ենթարկված հատուկ նշանակության չպահածոյացված սննդամթերքի առանձին տեսակներում նորմավորվում են պայմանական ախտածին միկրոօրգանիզմները, սանիտարացուցադրական միկրոօրգանիզմները եւ փտում առաջացնող միկրոօրգանիզմները, որոնք բնորոշում են արտադրության անվտանգությունը, սանիտարահիգիենիկ վիճակը եւ պահպանման ժամանակ արտադրանքի կայունությունը՝ աղյուսակ 2:

Նշված ցուցանիշներին համապատասխանությունը գնահատվում է հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների շրջանառության փուլում՝ դրանց պիտանիության ժամկետի ամբողջ ընթացքում:

**Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակներում կենսատեխնոլոգիական եւ պրոբիոտիկ միկրոօրգանիզմների պարունակությանը ներկայացվող պահանջները**

<b>Ցուցանիշներ</b>	<b>Թույլատրելի մակարդակներ</b>	<b>Արտադրանքի խմբեր</b>
Բիֆիդոբակտերիաներ եւ (կամ) այլ պրոբիոտիկ միկրոօրգանիզմներ (Lactobacillus, Propionibacterium ցեղերի)	1x10 <sup>6</sup>	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, հեղուկ արտադրանք՝ կաթնաթթվային եւ թթվեցրած սոյայի հիմքով՝ հղի կանանց եւ կերակրող մայրերի համար:

**Սննդամթերքում պայմանական ախտածին եւ սանիտարացուցադրական միկրոօրգանիզմներին ներկայացվող պահանջները**

**2.1 Միս եւ մսամթերք, թռչուն եւ դրանց վերամշակումից ստացվող արտադրանք**

<b>Ցուցանիշներ</b>	<b>Թույլատրելի մակարդակներ</b>	<b>Արտադրանքի խմբեր</b>
Մեզոֆիլային աէրոբ եւ ֆակուլտատիվ անաէրոբ միկրոօրգանիզմների քանակ, ԳԱՄ/գ	1x10 <sup>3</sup>	Միս (կենդանիների բոլոր տեսակները). պաղեցրած՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի համար
Աղիքային ցուպիկի խմբի մանրէները (կոլիձեւերը) չեն թույլատրվում արտադրանքի զանգվածում, գ	0.1	Միս (կենդանիների բոլոր տեսակները). պաղեցրած՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի համար
Proteus խմբի մանրէներ, չեն թույլատրվում մթերքի զանգվածում, գ	1.0	Միս (կենդանիների բոլոր տեսակները). պաղեցրած՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի համար:

## 2.2. Այլ արտադրանք

Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակներ	Արտադրանքի խմբեր
Մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների քանակ, ԳԱՄ/գ, ոչ ավելի	5x10 <sup>2</sup>	Պեկտին՝ դիետիկ սննդի արտադրանքի համար
	5x10 <sup>3</sup>	Չոր արտադրանք՝ նախատեսված դիետիկ կանխարգելիչ սննդի համար՝ խառնուրդներ՝ ձավարային, կաթնային, մսային (արտամղիչ տեխնոլոգիայի)
	1x10 <sup>4</sup>	Դոնդողանյութ սննդային՝ դիետիկ սննդի արտադրանքի համար
Աղիքային ցուպիկի խմբի մանրէները (կոլիձեւերը) չեն թույլատրվում արտադրանքի զանգվածում, գ	0,1	Չոր արտադրանք՝ նախատեսված դիետիկ կանխարգելիչ սննդի համար՝ խառնուրդներ՝ ձավարային, կաթնային, մսային (արտամղիչ տեխնոլոգիայի)
	1,0	Պեկտին՝ դիետիկ սննդի համար նախատեսված արտադրանքի համար. դոնդողանյութ սննդային՝ դիետիկ սննդի համար նախատեսված արտադրանքի համար
S.aureus, չի թույլատրվում արտադրանքի զանգվածում, գ	1	Չոր արտադրանք՝ նախատեսված դիետիկ կանխարգելիչ սննդի համար՝ խառնուրդներ՝ ձավարային, կաթնային, մսային (արտամղիչ տեխնոլոգիայի)
B.sereus, ԳԱՄ/գ, ոչ ավելի	10	Չոր արտադրանք՝ նախատեսված դիետիկ կանխարգելիչ սննդի համար՝ խառնուրդներ՝ ձավարային, կաթնային, մսային (արտամղիչ տեխնոլոգիայի)
Խմորասնկեր, ԳԱՄ/գ, ոչ ավելի	10	Չոր արտադրանք՝ նախատեսված դիետիկ կանխարգելիչ սննդի համար՝ խառնուրդներ՝ ձավարային, կաթնային, մսային (արտամղիչ տեխնոլոգիայի)
	50	Պեկտին (դիետիկ սննդի արտադրանքի համար)

Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակներ	Արտադրանքի խմբեր
Բորբոսներ, ԳԱՄ/գ, ոչ ավելի	50	Պեկտին (դիետիկ սննդի արտադրանքի համար)
	100	Չոր արտադրանք՝ նախատեսված դիետիկ կանխարգելիչ սննդի համար՝ ծավարային, կաթնային, մսային խառնուրդներ (արտամղիչ տեխնոլոգիայի):

### 2.3. Հղի կանանց եւ կերակրող մայրերի սննդի համար նախատեսված արտադրանք

Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակներ	Արտադրանքի խմբեր
Մեզոֆիլային աէրոբ եւ ֆակուլտատիվ անաէրոբ միկրոօրգանիզմների քանակ, ԳԱՄ/գ	$5 \times 10^3$	Ինստանտ թեյեր խոտաբույսերից (բուսական հիմքով)
	$2,5 \times 10^4$	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, չոր արտադրանք՝ ինստանտ պատրաստման (օգտագործման համար պատրաստի արտադրանքի մեջ)
	$5 \times 10^4$	Շիլաներ՝ կաթնային եւ հացահատիկային հիմքով (ինստանտ պատրաստման)
Աղիքային ցուպիկի խմբի մանրէները (կոլիձեւերը) չեն թույլատրվում արտադրանքի զանգվածում, գ	3,0 գ	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, հեղուկ արտադրանք՝ կաթնաթթվային եւ թթվեցրած սոյայի հիմքով
	1,0 գ	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, չոր արտադրանք՝ ինստանտ պատրաստման (օգտագործման համար պատրաստի արտադրանքի մեջ). ինստանտ թեյեր խոտաբույսերից
	0,1 գ	Շիլաներ՝ կաթնային եւ հացահատիկային հիմքով (ինստանտ պատրաստման)



Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակներ	Արտադրանքի խմբեր
E.coli չի թույլատրվում մթերքի զանգվածում, գ	10 գ	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով՝ չոր արտադրանք՝ ինստանտ պատրաստման (օգտագործման համար պատրաստի արտադրանքի մեջ)
S.aureus չի թույլատրվում արտադրանքի զանգվածում, գ	10 գ	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, հեղուկ արտադրանք՝ կաթնաթթվային եւ թթվեցրած սոյայի հիմքով
	1,0 գ	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, չոր արտադրանք՝ ինստանտ պատրաստման (օգտագործման համար պատրաստի արտադրանքի մեջ)
Բորբոսներ, ԳԱՄ/գ, ոչ ավելի	10	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, հեղուկ արտադրանք՝ կաթնաթթվային եւ թթվեցրած սոյայի հիմքով
	50	Ինստանտ թեյեր խոտաբույսերից
	100	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, չոր արտադրանք՝ ինստանտ պատրաստման (օգտագործման համար պատրաստի արտադրանքի մեջ)
	200	Շիլաներ՝ կաթնային եւ հացահատիկային հիմքով (ինստանտ պատրաստման)
Խմորասնկեր, ԳԱՄ/գ, ոչ ավելի	10	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, հեղուկ արտադրանք՝ կաթնաթթվային եւ թթվեցրած սոյայի հիմքով
	50	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, չոր արտադրանք՝ ակնթարթային պատրաստման (օգտագործման համար պատրաստի արտադրանքի մեջ). ինստանտ թեյեր խոտաբույսերից (բուսական հիմքով)
	100	Շիլաներ՝ կաթնային եւ հացահատիկային հիմքով (ինստանտ պատրաստման)
B.cereus, չի թույլատրվում մթերքի զանգվածում, սմ <sup>3</sup>	1,0	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, հեղուկ արտադրանք՝ կաթնաթթվային եւ թթվեցրած սոյայի հիմքով

Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակներ	Արտադրանքի խմբեր
B.cereus, ԳԱՄ/գ, ոչ ավելի	չի թույլատրվում 1,0 գ-ում	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, հեղուկ արտադրանք՝ կաթնաթթվային եւ թթվեցրած սոյայի հիմքով
	100	Ինստանտ թեյեր խոտաբույսերից (բուսական հիմքով)
	2x10 <sup>2</sup>	Արտադրանք՝ կաթնային հիմքով եւ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով, չոր արտադրանք՝ ինստանտ պատրաստման (օգտագործման համար պատրաստի արտադրանքի մեջ):

**2.4. Երեխաների բուժիչ սննդի համար նախատեսված հատուկ նշանակության արտադրանք՝ վաղաժին եւ թերքաշ երեխաների համար**

Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակներ	Արտադրանքի խմբեր
Մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների քանակ, ԳԱՄ/գ	1x10 <sup>2</sup>	Խառնուրդներ՝ կաթնային, ադապտացված, մանրէազերծված, կաթ եւ սերուցք՝ մանրէազերծված, ոչ ասեպտիկ լցման, կաթնաշոռ կալցինացված՝ պատրաստված կաթնային խոհանոցներում
	2x 10 <sup>2</sup>	Պաստերիզացված երշիկներ՝ մսային հիմքով
	5x10 <sup>2</sup>	Խառնուրդներ՝ վերականգնված, պաստերիզացված՝ պատրաստված կաթնային խոհանոցներում
	2x10 <sup>3</sup>	Արտադրանք՝ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով. արտադրանք՝ սպիտակուցի լրիվ կամ մասնակի հիդրոլիզատների հիմքով. արտադրանք՝ առանց ֆենիլալանինի կամ դրա ցածր պարունակությամբ. արտադրանք՝ վաղաժին եւ (կամ) թերքաշ երեխաների համար՝ վերականգնվող 37-50 °C ջերմաստիճանում
	3x10 <sup>3</sup>	Սպիտակուցի ցածր պարունակությամբ արտադրանք (օսլաներ, ձավարեղեն եւ մակարոնային արտադրատեսակներ եւ այլ արտադրանք), արտադրանք՝ վաղաժին եւ (կամ) թերքաշ

Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակներ	Արտադրանքի խմբեր
		Երեխաների համար՝ վերականգնվող 70-85 °C ջերմաստիճանում
	1x10 <sup>4</sup>	Սուբլիմացված արտադրանք՝ մսային հիմքով՝ մինչև 2 տարեկան երեխաների համար
	1,5x10 <sup>4</sup>	Սուբլիմացված արտադրանք՝ մսային հիմքով՝ 2 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար
	2,5x10 <sup>4</sup>	Լակտոզայի ցածր պարունակությամբ եւ առանց լակտոզայի պարունակության արտադրանք, չոր կաթնային սպիտակուցի բարձր պարունակությամբ արտադրանք
Աղիքային ցուպիկի խմբի մանրէներ (կոլիձեւերը չեն թույլատրվում արտադրանքի զանգվածում, գ)	1,0	Լակտոզայի ցածր պարունակությամբ եւ առանց լակտոզայի պարունակության արտադրանք: Արտադրանք՝ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով: Սպիտակուցի ցածր պարունակությամբ արտադրանք (օսլաներ, ձավարեղեն եւ մակարոնային արտադրատեսակներ եւ այլ արտադրանք): Արտադրանք՝ սպիտակուցի լրիվ կամ մասնակի հիդրոլիզատների հիմքով: Արտադրանք՝ առանց ֆենիլալանինի կամ դրա ցածր պարունակությամբ: Սուբլիմացված արտադրանք՝ մսային հիմքով: Արտադրանք՝ վաղաժին եւ (կամ) թերքաշ երեխաների համար
	0,3	Չոր կաթնային սպիտակուցի բարձր պարունակությամբ արտադրանք: Սուբլիմացված արտադրանք՝ կաթնային հիմքով (կաթնաշոռ եւ այլն)
E.coli չի թույլատրվում արտադրանքի զանգվածում, գ	10	Արտադրանք՝ վաղաժին եւ (կամ) թերքաշ երեխաների համար
S.aureus չի թույլատրվում արտադրանքի զանգվածում, գ	10	Արտադրանք՝ վաղաժին եւ (կամ) թերքաշ երեխաների համար
	1,0	Լակտոզայի ցածր պարունակությամբ եւ առանց լակտոզայի պարունակության արտադրանք: Չոր կաթնային սպիտակուցի բարձր պարունակությամբ արտադրանք: Արտադրանք՝ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով: Արտադրանք՝ սպիտակուցի լրիվ կամ մասնակի հիդրոլիզատների հիմքով: Արտադրանք՝ առանց ֆենիլալանինի կամ դրա ցածր պարունակությամբ: Սուբլիմացված արտադրանք՝ մսային եւ կաթնային հիմքով (կաթնաշոռ եւ այլն)

Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակներ	Արտադրանքի խմբեր
	0,1	Սպիտակուցի ցածր պարունակությամբ արտադրանք (օսլաներ, ձավարեղեն եւ մակարոնային արտադրատեսակներ եւ այլ արտադրանք)
Սուլֆիտ վերականգնող կլոստրիդիաներ, չեն թույլատրվում արտադրանքի զանգվածում, գ	0,1	Սուբլիմացված արտադրանք՝ մսային հիմքով
Բորբոսներ, ԳԱՄ/գ	10	Սպիտակուցի ցածր պարունակությամբ արտադրանք (օսլաներ, ձավարեղեն եւ մակարոնային արտադրատեսակներ)
	50	Արտադրանք՝ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով: Սուբլիմացված արտադրանք՝ մսային հիմքով՝ մինչեւ 2 տարեկան երեխաների համար: Արտադրանք՝ վաղածին եւ (կամ) թերքաշ երեխաների համար: Արտադրանք՝ սպիտակուցի լրիվ կամ մասնակի հիդրոլիզատների հիմքով: Արտադրանք՝ առանց ֆենիլալանինի կամ դրա ցածր պարունակությամբ: Սպիտակուցի ցածր պարունակությամբ արտադրանք (բացի օսլաներից, ձավարեղենից եւ մակարոնային արտադրատեսակներից)
	100	Լակտոզայի ցածր պարունակությամբ եւ առանց լակտոզայի պարունակության արտադրանք: Չոր կաթնային սպիտակուցի բարձր պարունակությամբ արտադրանք: Սուբլիմացված արտադրանք՝ մսային հիմքով՝ 2 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար: Սուբլիմացված արտադրանք՝ կաթնային հիմքով (կաթնաշոռ եւ այլն)
Խմորասնկեր, ԳԱՄ/գ	10	Արտադրանք՝ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով: Արտադրանք՝ վաղածին եւ (կամ) թերքաշ երեխաների համար: Արտադրանք՝ սպիտակուցի լրիվ կամ մասնակի հիդրոլիզատների հիմքով: Արտադրանք՝ առանց ֆենիլալանինի կամ դրա ցածր պարունակությամբ
	50	Լակտոզայի ցածր պարունակությամբ եւ առանց լակտոզայի պարունակության արտադրանք: Չոր կաթնային սպիտակուցի բարձր պարունակությամբ արտադրանք, Սպիտակուցի ցածր

Ցուցանիշներ	Թույլատրելի մակարդակներ	Արտադրանքի խմբեր
		պարունակությամբ արտադրանք (օսլաներ, ձավարեղեն եւ մակարոնային արտադրատեսակներ եւ այլ արտադրանք): Սուբլիմացված արտադրանք՝ մսային եւ կաթնային հիմքով (կաթնաշոռ եւ այլն): Սուբլիմացված արտադրանք՝ մսային եւ կաթնային հիմքով (կաթնաշոռ եւ այլն)
	100	Սուբլիմացված արտադրանք՝ մսային հիմքով՝ 2 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար
B.cereus, ԳԱՄ/գ	100	Արտադրանք՝ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով: Սպիտակուցի ցածր պարունակությամբ արտադրանք (օսլաներ, ձավարեղեն եւ մակարոնային արտադրատեսակներ եւ այլ արտադրանք): Արտադրանք՝ սպիտակուցի լրիվ կամ մասնակի հիդրոլիզատների հիմքով: Արտադրանք՝ առանց ֆենիլալանինի կամ դրա ցածր պարունակությամբ: Սուբլիմացված արտադրանք՝ մսային հիմքով՝ մինչեւ 2 տարեկան երեխաների համար: Արտադրանք՝ վաղաձին եւ (կամ) թերքաշ երեխաների համար
	$2 \times 10^2$	Լակտոզայի ցածր պարունակությամբ եւ առանց լակտոզայի պարունակության արտադրանք: Սուբլիմացված արտադրանք՝ մսային հիմքով՝ 2 տարեկանից բարձր տարիքի երեխաների համար:

## Հավելված 2

«Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների,  
այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի  
համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին»  
Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի

### ԱՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Աղի փոխարինիչների բաղադրությունը	Կիրառության պայմանները
1	2
<p>ա) կալիումի սուլֆատ, ադիպինային, գլյուտամինային թթվի եւ ածխաթթվի, սաթաթթվի, կաթնաթթվի, գինեթթվի, կիտրոնաթթվի, քացախաթթվի, աղաթթվի, օրթոֆոսֆորական թթվի կալիումական, կալցիումական եւ ամոնիումային աղեր</p>	<p>Սահմանափակված չէ, սակայն ֆոսֆորի պարունակությունը փոխարինիչների խառնուրդում չպետք է գերազանցի 4%-ը, իսկ <math>\text{NH}_4^+</math>-ը՝ փոխարինիչների ընդհանուր զանգվածի 3%-ը</p>
<p>բ) ադիպինային, գլյուտամինային թթվի, ածխաթթվի, կիտրոնաթթվի, սաթաթթվի, քացախաթթվի, գինեթթվի, կաթնաթթվի, աղաթթվի եւ օրթոֆոսֆորական թթվի մագնեզիումային աղեր, մագնեզիում չպարունակող այլ փոխարինիչների հետ խառնուրդում</p>	<p><math>\text{Mg}^{++}</math>-ի պարունակությունը չպետք է գերազանցի փոխարինիչների խառնուրդում առկա <math>\text{K}^+</math>, <math>\text{Ca}</math>, <math>\text{NH}_4</math> կատիոնների ընդհանուր պարունակության զանգվածի 20%-ը, իսկ P-ի պարունակությունը չպետք է գերազանցի փոխարինիչների ընդհանուր զանգվածի 4%-ը</p>

Աղի փոխարինիչների բաղադրությունը	Կիրառության պայմանները
1	2
գ) քացախաթթվի, ածխաթթվի, կաթնաթթվի, գինեթթվի, կիտրոնաթթվի եւ աղաթթվի քոլինային աղեր, քոլին չպարունակող այլ փոխարինիչների հետ խառնուրդում	Քոլինի պարունակությունը չպետք է գերազանցի փոխարինիչների խառնուրդի ընդհանուր զանգվածի 3%-ը
դ) ազատ ադիպինային, գլյուտամինային թթուներ, կիտրոնաթթու, կաթնաթթու եւ մալոնաթթու	Սահմանափակված չէ

Աղի փոխարինիչները կարող են նաեւ պարունակել՝

1) կոլոիդային սիլիցիում կամ կալցիումի սիլիկատ՝ փոխարինիչների խառնուրդի զանգվածի 1%-ից ոչ ավելին, առանձին կամ համակցված.

2) լցանյութեր՝ ընդհանուր օգտագործման անվտանգ եւ համապատասխան սննդամթերք (օրինակ՝ շաքար, հացահատիկային ալյուր):

### Հավելված 3

«Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների,  
այդ թվում՝ դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի  
համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին»

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի

**ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, ԱՅԴ  
ԹՎՈՒՄ՝ ԴԻԵՏԻԿ ԲՈՒԺԻՉ ԵՒ ԴԻԵՏԻԿ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՍՆՆԴԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՍՆՆԴԱՅԻՆ  
ԱՐԺԵՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
Սննդամթերք՝ լակտոզայի ցածր պարունակությամբ (առանց լակտոզայի պարունակության)	<b>ԼԱԿՏՈՂԱՅԻ ՑԱԾՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԱՌԱՆՑ ԼԱԿՏՈՂԱՅԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ՝ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ</b>			
	Սպիտակուց	գ/լ	12-21	
	Տաուրին	մգ/լ, ոչ ավելի	80	
	L-կարնիտին	Նույնը	20 (ավելացման դեպքում)	



Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	Ճարպ	գ/լ	30-40	
	Լինոլաթթու	Ճարպաթթուների ընդհանուր քանակության %-ը	14-20	
		մգ/լ, ոչ ավելի	4000-8000	
	Ածխաջրեր	գ/լ	65-80	
	Լակտոզա	գ/լ, ոչ ավելի	10	Լակտոզայի ցածր պարունակությամբ արտադրանքում
		Նույնը	0,1	Առանց լակտոզայի պարունակության արտադրանքում
	Հանքային նյութեր՝			
	կալցիում	մգ/լ	330-700	
	ֆոսֆոր	Նույնը	150-400	
	կալիում	Նույնը	400-800	
	նատրիում	Նույնը	150 - 300	
	մագնեզիում	Նույնը	30-90	
	պղինձ	Նույնը	0,3-1,0	

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	մանգան	մկգ/լ	10-300	
	երկաթ	մգ/լ	3-14	
	ցինկ	Նույնը	3-10	
	քլորիդներ	Նույնը	400-800	
	յոդ	մկգ/լ	50-150	
	մոխիր	գ/լ	3-5	
	Վիտամիններ՝			
	ռետինոլ (A)	մկգ-էկվ/լ	400-1000	
	տոկոֆերոլ (E)	մգ/լ	4-12	
	կալցիֆերոլ (D)	մկգ/լ	7,5-12,5	
	վիտամին K	Նույնը	25-60	
	թիամին (B1)	Նույնը	400-1000	
	ռիբոֆլավին (B2)	Նույնը	500-1500	
	պիրիդոքսին (B6)	Նույնը	300-1000	
	Պանտոտենային թթու	Նույնը	2700-5000	
	ֆոլաթթու (Bc)	Նույնը	60-150	
	ցիանկոբալամին (B12)	մկգ/լ	1,0-3,0	

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	նիացին (PP)	մգ/լ	2-10	
	Ասկորբինաթթու (C)	մգ/լ	60-150	
	քիոտին	մկգ/լ	10-40	
	կարնիտին	մգ/լ	10-20	
	ինոզիտ	մգ/լ	20-60	
	քոլին	Նույնը	50-150	
	Օսմոլյալություն	մՕսմ/կգ, ոչ ավելի	300	
<b>ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԼԱԿՏՈՂԱՅԻ ՑԱԾՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱԴՐԱՆՔ</b>				
	Սպիտակուց	գ/լ	40-47	
	Կազեին/շիճուկային սպիտակուց	-	80:20	
	Ճարպ	գ/լ	20-38	
	Լիճուկաթթու	Ճարպաթթուների ընդհանուր քանակության %-ը, ոչ պակաս	15	
		մգ/լ	5000-6000	
	Ածխաջրեր	գ/լ	60-65	

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ	
	Գլյուկոզա	Նույնը	25-28		
	Գալակտոզա	Նույնը	6-7		
	Լակտոզա	գ/լ, ոչ ավելի	16		
	Էներգետիկ արժեք	կկալ/լ	600-680		
Վաղ տարիքի երեխաների համար նախատեսված խառնուրդներ՝ սոյայի սպիտակուցի մեկուսիչի հիմքով	Սպիտակուց	գ/լ	15-20		
	Մեթիոնին	Նույնը	0,25-0,35		
	Ճարպ	գ/լ	30-38		
	Լինոլաթթու	Ճարպաթթուների ընդհանուր քանակության %-ը, ոչ պակաս		14	
		մգ/լ, ոչ պակաս		4000	
	Ածխաջրեր (դեքստրին-մալտոզա)	գ/լ	65-80		
	Էներգետիկ արժեք	կկալ/լ	650-720		
	Հանքային նյութեր՝				
	կալցիում	մգ/լ	450-750		
	ֆոսֆոր	Նույնը	250-500		
կալիում	Նույնը	500-800			

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	նատրիում	Նույնը	200-320	
	մագնեզիում	Նույնը	40-80	
	պղինձ	Նույնը	0,4-1,0	
	երկաթ	մգ/լ	6-14	
	ցինկ	Նույնը	4-10	
	մոխիր	գ/լ	3-5	
	Վիտամիններ՝			
	ռետինոլ (A)	մկգ-էկվ/լ	500-800	
	տոկոֆերոլ (E)	մգ/լ	5-15	
	կալցիֆերոլ (D)	մկգ/լ	8-12	
	վիտամին K	Նույնը	25-100	
	թիամին (B1)	Նույնը	300-600	
	ռիբոֆլավին (B2)	Նույնը	600-1000	
	պիրիդոքսին (B6)	Նույնը	300-700	
	ֆոլաթթու (Bc)	Նույնը	60-150	
	ցիանկոբալամին (B12)	մկգ/լ	1,5-3,0	
	նիացին (PP)	մգ/լ	4-8	

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	Ասկորբինաթթու (C)	մգ/լ	60-150	
	Տաուրին	մգ/լ	45-55	
	L-կարնիտին	Նույնը	10-20	
	Օսմոլյալություն	մՕսմ/կգ, ոչ ավելի	300	
Խառնուրդներ՝ սպիտակուցի լրիվ հիդրոլիզատների հիմքով՝ նախատեսված վաղ տարիքի երեխաների համար	Սպիտակուց (էկվ.)	գ/լ	12-22	
	Տաուրին	մգ/լ	40-55	
	L-կարնիտին	Նույնը	10-25	
	Ճարպ	գ/լ	25-35	
	Լինոլաթթու	Ճարպաթթուների ընդհանուր քանակության %-ը, ոչ պակաս	14	
			մգ/լ, ոչ ավելի	4000
	Ածխաջրեր	գ/լ	70-95	
	Էներգետիկ արժեք	կկա/լ	650-720	
	Հանքային նյութեր՝			
	կալցիում	մգ/լ	330-980	
	ֆոսֆոր	Նույնը	150-600	

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	կալիում	Նույնը	400-1000	
	նատրիում	Նույնը	150-350	
	մագնեզիում	Նույնը	50-100	
	պղինձ	Նույնը	0,3-1,0	
	երկաթ	մգ/լ	6-14	
	ցինկ	Նույնը	3-10	
	մոխիր	գ/լ	4-5	
	Վիտամիններ՝			
	ռետինոլ (A)	մկգ-էկվ/լ	500-800	
	տոկոֆերոլ (E)	մգ/լ	6-14	
	կալցիֆերոլ (D)	մկգ/լ	5-15	
	թիամին (B1)	Նույնը	400-600	
	ռիբոֆլավին (B2)	Նույնը	600-1000	
	պիրիդոքսին (B6)	Նույնը	500-700	
	ֆոլաթթու (Bc)	Նույնը	50-100	
	ցիանկոբալամին (B12)	մկգ/լ	1,5-3,0	
	նիացին (PP)	մգ/լ	3-8	

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ	
	Ասկորբինաթթու (C)	մգ/լ	50-150		
	Օսմոլյալություն	մՕսմ/կգ, ոչ ավելի	320		
Մեկ տարեկան երեխաների համար նախատեսված առանց ֆենիլալանինի (ֆենիլալանինի ցածր պարունակությամբ) խառնուրդներ	Սպիտակուց (էկվ.)	գ/լ	16-20		
	Ֆենիլալանին	մգ/լ, ոչ ավելի	500	Ամինաթթուների խառնուրդի հիմքով արտադրանքում բացակայում է	
	Տաուրին	մգ/լ	40 - 55		
	L-կարնիտին	Նույնը	10 - 25		
	Ճարպ	գ/լ	30 - 38		
	Լինոլաթթու	Ճարպաթթուների ընդհանուր քանակության %-ը, ոչ պակաս		14	
		մգ/լ, ոչ ավելի		5000	
	Ածխաջրեր	գ/լ	65 - 80		
	Էներգետիկ արժեք	կկա/լ	570 - 720		
Հանքային նյութեր՝					



Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	կալցիում	մգ/լ	300 - 700	
	ֆոսֆոր	Նույնը	300 - 500	
	կալիում	Նույնը	500 - 800	
	նատրիում	Նույնը	150 - 300	
	մագնեզիում	Նույնը	40 - 60	
	պղինձ	Նույնը	0,3 - 1,0	
	երկաթ	մգ/լ	3 - 14	
	ցինկ	Նույնը	4-10	
	մոխիր	գ/լ	4-5	
	յոդ	մկգ/լ	50-120	
	Վիտամիններ՝			
	ռետինոլ (A)	մկգ-էկվ/լ	500-800	
	տոկոֆերոլ (E)	մգ/լ	4-12	
	կալցիֆերոլ (D)	մկգ/լ	8-12	
	թիամին (B1)	Նույնը	350-700	
	ռիբոֆլավին (B2)	Նույնը	500-1000	
	պիրիդոքսին (B6)	Նույնը	300-700	

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	Ֆոլաթթու (Bc)	Նույնը	50-100	
	ցիանկոբալամին (B12)	մկգ/լ	1,5-3,0	
	նիացին (PP)	մգ/լ	3-8	
	Ասկորբինաթթու (C)	մգ/լ	20-100	
	Օսմոլյալություն	մՕսմ/կգ, ոչ ավելի	320	
Խառնուրդներ՝ նախատեսված վաղաձին եւ (կամ) թերքաշ երեխաների սննդի համար	Սպիտակուց	գ/լ	19 - 31	
	Տաուրին	մգ/լ	90-ից ոչ ավելի	
	Ճարպ	գ/լ	33 - 45	
	Լինոլաթթու	գ/լ	2,6 - 10,5	
	Ալֆա-լինոլենաթթու	մգ/լ	375-ից ոչ պակաս	
	Դոկոզահեքսանաթթու	մգ/լ	80 - 205	
	Արախիդոնաթթու	մգ/լ	120 - 295	
	Էյկոզապենտաթթու	%	Դոկոզահեքսանա-թթվի մակարդակի 30-ից ոչ ավելի	
	Ածխաջրեր	գ/լ	72 - 94	
	Էներգետիկ արժեք	կկա/լ	660 - 890	
	Հանքային նյութեր՝			

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	կալցիում	մգ/լ	800 - 1400	
	ֆոսֆոր	Նույնը	400 - 700	
	կալիում	Նույնը	450 - 1200	
	նատրիում	Նույնը	300 - 800	
	մագնեզիում	Նույնը	50 - 130	
	պղինձ	Նույնը	0,6 - 1,6	
	երկաթ	մգ/լ	13 - 20	
	ցինկ	Նույնը	7 - 13	
	քլորիդներ	Նույնը	400 - 1200	
	մանգան	մկգ/լ	45 - 200	
	յոդ	Նույնը	75 - 325	
	սելեն	Նույնը	13 - 70	
	Վիտամիններ՝			
	ռետինոլ (A)	մկգ-էկվ/լ	1500 - 3000	
	տոկոֆերոլ (E)	մգ/լ	15 - 60	
	կալցիֆերոլ (D)	մկգ/լ	15 - 60	
	վիտամին K	Նույնը	30 - 200	

Արտադրանքի անվանումը	Սննդային արժեքի ցուցանիշները օգտագործման համար պատրաստի արտադրանքի 100 գ-ում	Չափման միավորներ	Թույլատրելի մակարդակներ	Ծանոթագրություններ
	թիամին (B1)	Նույնը	750 - 2000	
	ռիբոֆլավին (B2)	Նույնը	600 - 4000	
	պանտոտենային թթու	մգ/լ	2,3 - 14,0	
	պիրիդոքսին (B6)	Նույնը	200 - 2000	
	ֆոլաթթու (Bc)	Նույնը	225 - 600	
	ցիանկոբալամին (B12)	մկգ/լ	0,6 - 5,3	
	նիացին (PP)	մգ/լ	2,5 - 38	
	ասկորբինաթթու (C)	մգ/լ	60 - 300	
	ինոզիտ	Նույնը	30 - 350	
	բիոտին	մկգ/լ	10 - 300	
	քոլին	մգ/լ	50 - 350	
	L-կարնիտին	մգ/լ	15-45 (ավելացման դեպքում)	
	նուկլեոտիդներ	մգ/լ	35-ից ոչ ավելի (ավելացման դեպքում)	
	Օսմոլյալություն	մՕսմ/կգ, ոչ ավելի	310	

Կազեինի նկատմամբ լաբորատոր վերահսկողությունն իրականացվում է սահմանված կարգով հաստատված վերահսկողության մեթոդի առկայության դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ